// ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ Ը. 1870 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԳԵՐ. ՀԱՍՈՒՆԵԱՆԻ ՄԻ ԿՈՆԴԱԿ։

Կ. Պոլսոյ Օրագիր անուն լրագրոյ 232 օրաթերթի մէջ կարդացինք գեր. Հասունեան Հռոմէադաւան--Հայոց Պատրիարքի կոնդակը՝ առ Հռոմէադաւան--Հայ ժողովուրդս գրեալ 'ի յորդոր սիրոյ և խաղաղութեան :

Թէպէտ այս կոնդակի վրայ մտածելն անգամ աւելորդ էր, բայց նորա մէջ մի քանի բռնաբարելի կէտեր նկատելով ընդդէմ ճշմարտութեան, պարտք համարեցի այն կէտերուն նկատմամբ պարունակեալ կեղծիքը յերևան հանելու մտօք հետևեալ դիտողութիւնը ընել 'ի դիտութիւն Հայոց հասարակութեան :

Ե. Նորին գերապատուութիւնը իր կոնդակի մէջ անցեալ 1869 տարուան Վատիկանու ժողովքի վրայ խօսելով, նոյն ժողովքը սուրբ և տիեզերական կանուանէ, և նորա վճիռները տիեզերական սուրբ ժողովոցն Կ. Պոլսոյ՝ Եփեսոսի ևն վճիռներուն համազօր համարելով՝ նզովից ներքև կենթարկէ նորա աննահանջելի վճռոցըն հակառակամարտ գտնուողները՝ իբրև 'ի Հոգւոյն սրբոյ ներշնչեալ վարդապետութեանց :

Արդ թէ որ Գեր. Հասունեանի դիտաւորութիւնը ամէն ճշմարտութիւն իր նշանակութեամբը յայտնել էր, լաւ չէ՞ր ը-

նէր, որ կեղծիքը իսկութեան հետ չըշփոթէր. և Վատիկանու ժողովքը իր ներքին նպատակովը ակն յայտնի ընէր ամենեցուն, և զանի սուրբ տիեզերական և Հոգւոյն սրբոյ ներշնչութիւն ունեցող տիտղոսներով զարդարելուն տեղը՝ լոկ Պապական գերիշխանութեան վերայ ուրիշ գերմարդկային տիտղոս մի աւելցնող ժողովք անուանէր :

Ո՞վ չգիտեր, որ Հռովմէական լծոյն կուրօրէն ծառայող՝ և նորա փառասիրութիւնը անմիտ խնկարկող հոգևորականք էին պապին հրաւիրանաց համեմատ այն տիեզերական ժողովը կազմող անդամները, ուրիշ գիտութիւն չունենալով, բայց եթէ Պապական խարխուլ գահոյն նեցուկ մի պատրաստել: Թէպէտ և Պապական հրաւէրը առ ամենայն Քրիստոնեական եկեղեցւոյ Հովիւները եղած էին, բայց քանզի նոքա այդ տիեզերական կարծուած ժողովքէն ներշնչութեամբ ճշմարիտ Հոգւոյն սրբոյ աւելի կանխատես լինելով Աւետարանական Հոգւոյն հակառակ Պապին ընելիք ժողովոյն նպատակը, որով փոխանակ միութեան՝ նոր փեռեկտումն պիտի ընդունէր Քրիստոսի հարսը, և անարատ և սուրբ կրօնքը իր սրբութեան վերայ յաւելուած մի ալ պիտի ունենար մեղանչական անձն մի անսխալական ընելու պարտաւորելով, ինչպէս որ եղաւ և պտուղն ևս վայելեց Հռովմայու գահը, բայց ի բաց հերքեցին նորա ամեն հրապուրական հրաւէրները: Նորին գերապատուութիւնը թէ որ ճշմարիտ և ողջամիտ հոլուայ հերքումները կարդացած է, միանգամ կըհրաւիրենք կարդալ նաև մեր Վեհափառ Հայրապետի իմաստալից բանիւք և կանխատես գուշակութեամբ ուղղած հերքման և զգուշացուցանող Կոնդակը, ուր պիտի տեսնայ Հոգւոյն սրբոյ ճշմարիտ ներշնչութիւնը՝ ըլլալիքէն յառաջ ապագային գուշակութեամբ՝ գրեալ առ նախկին Պատրիարքն Կ. Պոլսոյ Պօղոս Արքեպիսկոպոս՝ այժմեան Առաջնորդն Զմիւռնոյ :

Երբ կհարցնեմք, այն ժողովքը՝ որ արդէն իւր անտեղի վարդապետութեամբք և սուրբ կրօնի ճշմարտութեանը ներհակ դրութեան հետևող եղած են, կարո՞ղ է տիեզերական տիտղոսը ունենալ :

Այն ժողովոյ մէջ, որոյ խնդիրները սուրբ Աւետարանի և առաքելական աւանդութեանց բովին մէջ փորձուելուն տեղը, շահասիրութեան և փառախնդրութեան բովին մէջ կլուծուին, կարո՞ղ եմք առըէ անուանել զայն: Այն ժողովոյ վճիռները, որոյ բուն նպատակը եղած է ի բնէ ապականութեան ենթարկեալ մարդը՝ աստուածային բնութեան յատուկ եղած ստորոգելիներով վերամպատուել, կարո՞ղ ենք ներշնչութեամբ Հոգւոյն սրբոյ եղած համարել:

Թող Գեր. Հասունեանը իբրև քրիստոնեայ, իբրև առաքելական ճշմարիտ և սուրբ վարդապետութեանց քարոզիչ, մանաւանդ իբրև Քրիստոսի Փրկչին մերոյ Սրբութեան պաշտօնեայ՝ իր խղճին մէջ մտնալով՝ լաւ կշռադատութեամբ քննէ իր խօսքերուն և պաշտելի ժողովոյն ուժը և զօրութիւնը, մանաւանդ նորա նպատակը և վճռոց ճշտութիւնը, և ապա վճռէ՝ թէ կհամապատասխանէ՞ տիեզերական ժողովոց նպատակին և ոգւոյն :

Մարդոց անմտութիւնը այն խնդրոց մէջ աւելի բացայայտ կերևնայ, ուր որ փառասիրութիւնը շողոքորթելու գլխովամբ

ճշմարտութեան ձայնը կխղդեն։ Պապական Աստուածաբանութիւնը մի ժամանակ մարդկութիւնը Աստուածութեան հետ կապող մի օղ հնարել ուզելով, Պապը փոխանորդ Քրիստոսի և ընդհանրական եկեղեցոյ գլուխ հրատարակեց։ Բանի մի դարերքը՝ պապական շանակութիւնը ուրիշ հովուապետներէ բարձրացնել ուզելով՝ ի հաւատոյս անոխալ ըրաւ. այս դարուս մէջն ևս աւելի սրբացնելու և կենդանոյն Սրբոց կարգը համադասելու մտօք՝ անոխալական քարոզեց. ո՞ գիտէ՝ այս կոյր մարդկութեան փառաց պաշտօնեայները մի ժամանակ անցնելէն ետքը՝ ի՞նչ պիտի ընեն. գուցէ անմահ, մշտնջենաւոր, Աստուծոյ Փոյթ-Ինեանը Փոյակից՝ և երկրի վերայ նորա Սրբո-Ինեան պաշտօնեաներուն հաղորդ, և եթէ ներելի է ասել, գուցէ՝ և Աստուած երկրի։—Կը ցաւինք, որ Նորին գերապատուութիւնը՝ որ բաւական հմուտ գոլով Աստուածային և եկեղեցական գրոց, և ներքին համոզմամբ ջատագով է միշտ կրօնի սրբութեան և աւետարանական Հոգւոյն, իր ներքին համոզումը այսպէս կխանգարէ առաջինակ կարծեաց և մոլար շաւղաց հետևելով, գուցէ՝ ինչպէս որ հաւատաց է, Պապական գահին շքովը իր շուքը ցոլացնելու դատապարտելի բաղձանքով։

Գեր. Հասունեանը իր կոնդակին մէջ նոյն տիեզերական ժողովքի անհամաձայնութեան պատճառաւ ցրուիլը չկրնալով պատրուակել, այսպէս կըսէ. «յիշեալ տիեզերական ժողովքը թէպէտ չաւարտեցաւ, բայց որովհետև ամենապատիւ հարց ժողովոյ ընդհանուր հրաման եղած էր քիչ մը ժամանակ կարող ըլլալ հեռանալ»։ Երդ թէ որ ճշմարտութեան վարդապետ է, ինչո՞ւ բացայայտ չըսէր, որ Պապին անդ-ղանդականոյ-Ինեան խնդրոյն վրայօք ժողովքը անհամաձայն դանուելով քակուեցաւ, թէպէտ և բռնութիւններ ևս եղան, սակայն լաւ համարեցան ժողովոյ հարքը ձգել և հեռանալ փախստեամբ, քան թէ այս նոր և անլուր մոլորութեան հեղինակ լինել։ Երանի՞ թէ՝ նորին Գերապատուութիւնը ևս նոցա մէկը լինէր, և ուղղափառ կարծած եկեղեցին՝ այս նոր մոլորութենէն ազատող հանդիսանար՝ թէև անարգանօք, բայց ինչպէս որ հաւանական է, իր հօտին սիրելի, և հիմայ որ իր հօտաղուրկ իշխանութիւնը սիրոյ և խաղաղութեան ձայնով հաստատելու ելած է, գուցէ այն ժամանակը ճշմարտութեան ձայնով Ազգային իրաւամբ հաստատուէր։

Ռ. Մեր քննելիք մէկ կետն ևս Նորին Գերապատուութեան կոնդակի մէջ ըսած այս կէտն է, որ կըսէ.... «մանաւանդ Հռոմայ քահանայապետին գլխաւորութեան և անմոլար վարդապետութեան խնդրոյն վրայօք մեր եկեղեցւոյ ճշգրիտ և հինաւանդ վարդապետութիւնը յիշեալ ժողովին ներկայացնելով՝ ամենուն յայտնի ընծայեցին, որ նոյնը նորահնար գիւտ մը չէ երբէք, այլ թէ մեր եկեղեցին սկզբէն մինչև ցվերջին դարս նոյն վարդապետութիւնը... հանդիսապէս քարոզած է, և միշտ իրրև ընդհանուր վարդապետութիւն ըմբռնած է, մանաւանդ թէ՝ Կիլիկիոյ պատրիարքաց վերջին շարքը սոյն վարդապետութեանց ախոյեան և պաշտպան հանդիսացած է»։ Ահա քեզ նոր և անլուր ստութիւն։ Հայաստանեայց եկեղեցին երբ Հռոմէական եկեղեցւոյ նորածին վարդապետութեանց

խոնարհած է։ Թէ որ Գէր. Հայրը հաւատոյ եղած վարդապետութեանց համար կըսէ, որ ամեն քրիստոնեայ եկեղեցիք միօրինակ կդաւանին, այն վարդապետութիւնները ընդհանուր առաքելական վարդապետութիւնք են. իսկ եթէ Հռովմայէն ծնած վարդապետութեանց մասին կակնարկէ իր խօսքը, որ վարդապետութիւնքն են՝ որոց Հայոց եկեղեցին պաշտպան հանդիսացած է, կամ նորա մտացածին վարդապետութիւնները. էբրեր ընդհանուր վարդապետութեան ընթացք ունի, կամ ինչպէս որ ինքն կմեծարանէ, նոյն վարդապետութեանց պէս յեան և պաշտպան հանդիսացած է։

Թէ որ յաւուրս Կոստանդին Կաթողիկոսին Սսոյ և Հեթմոյ Երքայի ըստ յորդորանաց Իննովկենտիոս Գ. Պապին Հռովմայ ի Սիս գումարած ժողովքին համար կըսէ, որ գումարեցան սուրբ Հոգւոյն և յՍրբոյ Եղիսան մասին՝ համաձայն Հռովմէական Աստուածաբանութեան նորածին վարդապետութիւնը քննելու՝ և եթէ կարելի է՝ ընդունելու համար, յայտնի է որ՝ Հայք այս վարդապետութիւնը տիեզերական սուրբ ժողովոց Հանդանակին յաւելուած համարելով, ամենևին չընդունեցին. և թէ որ մասնաւոր անձինք գտնուեցան նորասէր և փոփոխամիտ մտաք այս վարդապետութեանը և ուրիշ վարդապետութեանցը հետևողները, անոնք են, որ Հայոց եկեղեցւոյ միութենէն հեռանալով՝ Պապական գահուն յաւելուած եղան, որոց հիմայ նորին Գերապատուութիւնը Կնէիէոյ Կարդինալ տիտղոսով գահակալել կերպաղէ։

Այս մտաք ժողով մի տեղի ունեցաւ դարձեալ ի Սիս յաւուրս Մեսրովբ Կաթողիկոսի և Կոստանդինոյ վերջնոյ Երքայի, որոց նպատակն էր՝ ըստ ոմանց պապամիտ անձանց ընդունել տալ Հայոց ընդ խառնոնումն ըստ ի բաժակ Տեառն. բայց սակայն Հայք՝ որ թէ ի կրօնական արարողութիւնս և թէ ի հաւատոյս՝ Աւետարանական վարդապետութեանց պարզ և անմոլար մտաք հետևիլը սրբութիւն համարած էին, յայսպիսի մարդկային աւանդութեանց և վարդապետութեանց ողջամիտ մտաք զգուշանալը լաւ համարելով՝ բաց է ի բաց հերքեցին։

Որ դարուն մէջ Հայոց եկեղեցին Հռովմայու եկեղեցին մայր եկեղեցեաց՝ և նորա Պապը Փոխանորդ Քրիստոսի և գլուխ եկեղեցոյ ճանաչած ունի։ Պատմութեանց մէջ աւելի բացայայտ կտեսնուի Հայոց՝ Յունաց եկեղեցւոյ հետ միանալիք խնդիրը քան թէ Հռովմայու՝, որ տիեզերական ժողովներէն ետքը նորանոր վարդապետութեամբք և անտեղի Աստուածաբանական խնդրովք եկեղեցեաց միութենէն հեռանալու վերայ էր։ Թէ որ լաւնկատելիք քրիստոնէական եկեղեցւոյ այսքան մասն առ մասն փեռեկտիլը, Հռովմայու գահակալին փառասիրութեան և բռնութեանց ծնունդ կդտնանք. յորոց Հայոց եկեղեցին միշտ կխորշէր իր առաքելաւանդ ճշմարիտ վարդապետութիւնները անաղարտ պահելու համար։

Երբ լաւ կընէր թէ որ Գէր. Հասունեանը մեր Եկեղեցւոյ անդրանիկ և Առաքեալներէն շարունակուած աղատութիւնը երբեմն Պապական լծոյն խոնարհած բռնաբարելի փաստիւք ցուցանելու տքնելոյն տեղը՝ իսկութեանը և ճշմարտութեանը քարոզիչ հանդիսանար իր հօտին.

որով թէ իր եկեղեցւոյն հաւատարիմ աւանդապահ կլինէր, և թէ իր հօտաղուրկ իշխանութիւնը մասամբ իւիք կհաստատէր։ Ի վերջոյ այս ևս կըսեմք, ինքը որ իր կոնդակը սիրոյ և խաղաղութեան յորդորանքով կվերջաւորէ, պիտի գիտնայ, ուր որ հաստակաց իրաւունքը կբռնաբարուի, այն տեղ սէրը և խաղաղութիւնը անյուսալի է։

ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԵԱՑ ԳԻՒՂՕՐԷԻՑ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ ՇԱՄԱԽԻՈՅ։

Սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանքն շատ տարի է որ շինված է, բայց շինութեան թուականն ջնջված լինելով անյայտ է մնում հետաքրքիրներից. ես հետաքրքրութեամբ շատ կամեցայ տեղեկանալ շինութեան սկզբան, բայց չ՝կարացի։ Թէ և արևմտեան եկեղեցւոյ դրան ճակատին շատ բարձր դրած կայը յիշատակարան, բայց ջնջված էր. նոյնպէս ևս սեղանի ճակատումն կայը դրեր անվերծանելի՝ 'ի տեղիս տեղիս կային արտաքուստ որմանց արձանագրեր, բայց 'նոքա էին վերանորոգութեան արձանագրեր՝ և ոչ թէ շինութեան. ուստի հարկ չ՝համարեցի անցուցանել 'ի գրի։

Այս վանք՝ ինչպէս որ պատմում են ամենն տեսնողներ, Մոստաֆայ Խանի ժամանակում՝ շատ հարուստ է եղած, շատ միաբան Վարդապետներ և Եպիսկոպոս Առաջնորդ է ունեցել։ Այս վերջին ժամանակումն Յոհան անուն եպիսկոպոս է ունեցել Առաջնորդ, որ շատ աշխատութիւն է ունեցել վանքի վերայ։ Այց նորա մահուանից յետոյ՝ այս վանք ընկեր է զանազան յեղափոխութեանց ներքոյ, և այնպէս կորցրել է իրան առաջվայ փառքն, հարստութիւն, և միաբանք. միայն գերեզմանաքարերն են մնացել Վարդապետաց և Եպիսկոպոսաց յաւիտենական վկայ յառաջվայ փառաւորութեան և այժմեան աւերակութեան այն սուրբ տաճարին։ Որպէս հաւաստի տեղեկացայ ես, յառաջ շատ վարելահողեր է ունեցել, բայց Հայազգի բնակիչք վանքը աւերակ լինելու պատճառաւ սեպհականել են իրանց։ Յետքանի ամ ամայի մնալոյ այս վանքին՝ խսպառ վերջին դրութեան է հասել։ Վերջին հարուածն էլ տուած են այս տաճարի շինութեան 27 և 59 տարուայ ահագին երկրաշարժն Շամախւոյ։ Այս վանքն խսպառ խարխսլված է, և իրան աչք ձգած հոգեսէր Հայազգեացն է սպասում՝ որ վերանորոգեն իրան 'ի սէր Քրիստոսի Նախավկային Սրբոյն Ստեփաննոսի։ Ես որքան որ տեսնում եմ այս սուրբ Տաճարի աւերակ լինիլն, արտասուք եմ թափում, զԱստուած եմ աղաչում, որ օգնական լինի և շարժէ Հայազգեաց սիրտը, որ այս սուրբ տաճարը նորոգեն։ Այս վանքն մի անդրանիկ վանք է Շամախու վիճակի համար։ Այս վանքումն են պարծանք ունեցած միշտ Հայեր օտար ազգաց յառաջ, և այս վանքումն է Քրիստոսի սուրբ Խաչն բարցրացած՝ փոխանակ կռոց արձանների. բայց ի՞նչ ասեմ՝ որ այժմ խսպառ հեռա-